№ 86 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 27 ԱՊՐԻԼԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 27 ԱՊՐԻԼԻ № 86

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Մայիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 7 ռուբլի։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։

Կովկասից դուրս ապրող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Փարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„Ի. Ե. ՓԻԹՈԵՎ եւ ԸՆԿ."

Նաւթարդիւնաբերական և Առևտրական Ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ այսօր, չորեքշաբթի, ապրիլի 27-ին, ցեր. ժամը $1^{1}/_{2}$-ին, վարչութեան մէջ (Լերմոնտովսկայա, № 20) կը կատարվի ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ընկերութեան հիմնադիր

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ։

1—1

Հինգշաբթի, ապրիլի 28-ին, Կայս. Կովկ. Գիւղատնտեսական Ընկ. դահլիճում կայանալու է

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Օրակարգ.
ա) Անջրդի հողերի ոռոգման հարցը Արաքսի հովտում։ Կը զեկուցանի (ռուսերէն լեզւով) Գ. Մուրադեան։
բ) Հերթական խնդիրներ՝ վարչութիւն։
Սկիզբն է ժամը $7^{1}/_{2}$-ին երեկոյեան։ Կարող են ներկայ լինել նաև հիւրեր։ առ. 423. 2—1

Adresse Télégraphique SANITAS
Адресъ Телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԻ
ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

ՀԵՆՑ ՆՈՐ Է ՎԱՃԱՌՔԻ ՀԱՆՎԱԾ
„СОСНОВАЯ ВОДА"
Ընկերութեան սեփական պատրաստած։
«Սօսիի ջուրը» հիանալի թարմացնում և մաքրում է սենեակների օդը։
425. 1—1

ՆԵՎՐԱՍՏԵՆԻԱՆ բժշկում է
ԲԱՈՒԷՐԻ
ՍԱՆԱՏՕԳԵՆԸ
Իսկականը միայն կարմիր բանդերօլով։
(B. 30365) 358. 1—1

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅԵՏԱՁԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Թիֆլիսի հասարակութեան մի խումբ ներկայացուցիչներ դիմում են արել Թիֆլիսի փոխ-առաջնորդ Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեանին և տեղակալ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանին, խնդրելով յետաձգել կաթողիկոսական պատուիրակների ընտրութիւնը մինչև աշուն։

Դիմողները պատճառաբանում են իրանց խնդիրքը նրանով, որ մայիսեան ընտրութիւնները չափազանց վաղաժամ են և շատ հեռու՝ կաթողիկոսական ընտրութեան օրից, մինչդեռ աշնանը կարելի էր աւելի մեծ յարմարութիւններով և գիտակցօրէն կատարել պատուիրակների ընտրութիւնները, մանաւանդ որ այն ժամանակ աւելի պարզված կը լինէր ընտրողների համար կաթողիկոսական թեկնածուների հարցը։

Մենք բոլորովին իրաւացի ենք գտնում դիմողների առարկութիւնները և մեր լրագրի էջերում յայտնել ենք նոյնիմաստ կարծիքներ։

Թիֆլիսի թեմը հեռու ընկած, անապատներով և ծովերով բաժանված մի երկիր չէ, որը կտրված լինէր Էջմիածնից հազարաւոր մղոններով և անկարելի լինէր հաղորդակցութիւն ունենալ նրա հետ։ Աշնանը նա ամենաապահով կերպով կարող է պատուիրակներ ընտրել, յետոյ այդ պատուիրակների ձեռքով ընտրել թեմական պատգամաւոր՝ Էջմիածին գնալու համար։

Շտապելու ոչ մի կարիք չը կայ։ Եւ շտապելը ներկայ պայմաններում նոյն իսկ վնասակար է, որովհետև ընտրողները անպատրաստ են կաթողիկոսական թեկնածուների անուն տալու և նախնական ժողովներում որևէ դրական ու որոշ դիրք բռնելու դէպի ընտրութիւնները։

Որքան կարճ լինի ժամանակամիջոցը, որը բաժանում է ժողովրդի ընտրական ժողովը կաթողիկոսական ընտրութեան օրից, այնքան աւելի մօտ կը լինի ժողովրդի ձայնը դէպի այն քուէն, որը նա իր ներկայացուցիչների ձեռքով կը տայ իր կենտրոնական ընտրեալին։

Աչքի առաջ ունենալով որ պատուիրակային ընտրութիւնների յետաձգելը կը տայ միայն նպատակայարմարութիւն և օգուտ, ոչ մի վնաս չը հասցնելով և ոչ մի անյարմարութիւն չը ստեղծելով, ցանկալի է, որ Թիֆլիսի հասարակութեան շատ շրջաններում յարուցված հարցը՝ ընտրութիւնների յետաձգման մասին յարգվէր հայ հոգևոր իշխանութեան ներկայացուցիչների կողմից։

Ա. Ք.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆ

V *)

Վերջին երկու տարին, երբ Ա. Մանթաշեանը վերադարձաւ Թիֆլիս և անցկացրեց երկու ձմեռ իր մայրենի քաղաքում, նա բացի իր մասնաւոր գործերից սկսեց հետաքրքրվել և հասարակական կեանքի մի քանի կողմերով։

Երկու խնդիր հետաքրքրում էին նրան առանձնապէս. դա գիւղատնտեսական դպրոցի հիմնարկութիւնն էր և հայ թատրօնական գործի ապահովութիւնը։

Գիւղատնտեսական դպրոց նա կամենում էր հաստատել Երևանեան նահանգում։ Այդ դպրոցի ծրագրի և ծաւալի մասին նա խորհրդակցել է մի քանի անգամ մասնագէտ անձերի հետ և հետաքրքրվում էր այն վէճով, որ բացվել էր հայ մամուլի էջերում և Հայ Գիւղատնտ. ու Տնայն. Ընկերութեան նիստերում, թէ որտեղ է նպատակայարմար բանալ դպրոցը։

Վեհարանի շինութեան, Էջմիածնի Մայր Տաճարի նորոգութեան և Ներսիսեան դպրոցի շինութեան հետ կապված ծախքերը արգելառիթ հանդիսացան անմիջապէս դիմել գիւղատնտեսական դպրոցի հիմնադրութեան։ Մանթաշեանը որոշել էր այդ խնդրով զբաղվել առաջիկայ սեպտեմբերին, երբ նա յոյս ունէր վերադառնալ Թիֆլիս։ Մահը թոյլ չը տուեց իրագործելու այդ նպատակը իր կենդանութեան օրով։

Թատրօնական գործի վերաբերութեամբ նա այն արաւ, որ մի քանի տարով ապահովեց հայ թատրօնական ներկայացումները, յետաձգելով խնդրի արմատական լուծումը ապագայի։ Խոստացաւ իր կողմից տարեկան նպաստ 5000-ական րուբլի հինգ տարի ժամանակով։ Թատրօնական յատուկ շէնք ունենալու կամ ֆօնդ կազմելու խնդիրները պահանջում էին ծախքեր, որոնց համար անհրաժեշտ էին կամ մասնակի անհատական նուիրատուութիւններ կամ հանգանակութիւններ։

Առաջինի համար նա դեռ խոստումներ չէր անում, երկրորդի համար ասում էր, որ նա կը տայ հարկաւոր գումարի կէսը, եթէ միւս կէսը հանգանակվի մասնաւոր կերպով։

Այդ երկու խնդիրները—գիւղատնտեսական դպրոցի հիմնարկութեան և թատրօնական ֆօնդի կազմութեան խնդիրները—մնացին չը լուծված։

Մանթաշեանի վրա լաւ տպաւորութիւն էր գործել այն հանգամանքը, որ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը ունի սեփական բնակարան, և ցանկալի էր համարում նոյնը միւս ընկերութիւնների համար. բայց ոչ մի ծրագիր չը ձևակերպեց այդ իմաստով, մտածելով որ այդտեղ կարևոր են գործնական քայլեր և ոչ առաջարկներ։

Մահը վրա հասաւ շատ վաղ և Մանթաշեանը անկարող եղաւ իրագործել իր վերջին ցանկութիւնները։

(Կը շարունակվի)

---

*) Տես «Մշակ» № 85.

ԱԼ. ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

◆ Ալ. Մանթաշեանի որդիները ստացել են հետևեալ հեռագիրները.

Էջմիածին, 26 ապրիլ.—Ողբում եմ ձեր և հայոց ազգի, եկեղեցու մեծ կորուստը։ Յաւիտենական հանգիստ անմոռանալի Ալէքսանդր Իվանովիչին, իմ բարերարին։ Մեսրոպ եպիսկոպոս

Ալէքսանդրիա, 8 մայիսի (ն. տ.).—Խորապէս յուզված եմ իմ բարերար Ալէքսանդր Մանթաշեանի անփոխարինելի կորստով. արտայայտում եմ ձեզ ամենաանկեղծ ցաւակցութիւններս։ Կոմիտաս վարդ.

Ալէքսանդրիա, 9 մայիսի (ն. տ.).—Խնդրում ենք դնել արծաթէ պսակ Եգիպտոսի ծառայողների կողմից դագաղի վրա։ Մութաֆեան

Ալէքսանդրիա, 8 մայիսի.—Խնդրում ենք դնել պսակ «Բօրժօմ» շոգենաւի կողմից։ Ալլուս

◆ Երկուշաբթի, ապրիլի 25-ին, Թիֆլիսի դումայի նիստում, քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, բանալով նիստը, մի համառօտ ճառ արտասանեց, որով յայտնելով Ալ. Մանթաշեանի—որ առաջներում ամբողջ 16 տարի եղել է դումայի ձայնաւոր—մահը, նկարագրեց նրա գործունէութիւնը իբրև նուիրատուի, յիշելով որ նա ունեցել է բազմաթիւ թոշակաւորներ բարձր կրթական հաստատութիւնների մէջ, նպաստել է զանազան կրթական և կուլտուրական հաստատութիւնների, հիմնել է Թիֆլիսի Առևտրական դպրոցը՝ տալով նրա շինութեան համար մօտ 150,000 ր., նպաստել է փոքրահասակ յանցաւորների գաղութին՝ տալով 40,000 ր., նուիրել է 250,000 ր. Ներսիսեան դպրոցի շինութեան համար, նուիրել է խոշոր գումարներ Էջմիածնի տաճարի վերանորոգութեան, նոր վեհարանի շինութեան համար և այլն և այլն։ Ապա նա յայտնեց, որ ուպրավան որոշել է հանգուցեալի յիշատակը յարգելու համար ներկայացնել դումային հետևեալ առաջարկները. 1) յարգել հանգուցեալի յիշատակը ոտքի կանգնելով, 2) ցաւակցութիւն յայտնել հանգուցեալի որդիներին, 3) դնել նրա դագաղի վրա արծաթեայ պսակ այս մակագրութեամբ. «Նախկին ձայնաւոր Ալէքսանդր Իվանովիչ Մանթաշեանին՝ Թիֆլիս քաղաքի հասարակական վարչութեան կողմից»։

Դուման ընդունեց առաջին երկու առաջարկները միաձայն, ոտքի կանգնելով, իսկ երրորդ առաջարկը՝ ձայների մեծամասնութեամբ։

◆ Ալ. Մանթաշեանի մարմինը կը հասնի Թիֆլիս վաղը, հինգշաբթի, և կայարանից ուղղակի կը տարվի Վանքի մայր եկեղեցին։ Թաղումը, ինչպէս յայտնեցինք, տեղի կունենայ շաբաթ, ապրիլի 30-ին։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
25 ապրիլ

Պետերբուրգ.—Պրօֆէսոր բարօն Տաուբէն նշանակվեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական։

—

Ռոստով Դ./վ.—Բօրսային ընկերութիւնը պատրաստակամութիւն յայտնեց նիւթապէս աջակցելու Ռոստովում համալսարան հաստատելու գործում։

—

Ստրասբուրգ.—Կայսրն ընդունեց համալսարանի 2000 ուսանողների կողմից ներկայացած պատգամաւորութեան, որ ողջունեց կայսրի գալուստը ռեկտօրի գլխաւորութեամբ։ Կայսրը յայտնեց շնորհակալութիւն և ասաց, որ սպասում է, որպէսզի ուսանողները կեանք մտնելու րոպէից այն տպաւորութիւնը ստանան, թէ ամենակարևորը ոչ թէ կուսակցութիւնն է, այլ հայրենիքի բարգաւաճումը և ժողովրդի բարեկեցութիւնը. կայսրը յոյս ունի, որ նրանց առաջնորդող աստղ և նպատակ կը լինի միշտ հայրենիքի բարիքը։

Կայսրը աւտոմօբիլով մեկնեց Մէց։

—

Փարիզ.—Ներքին գործերի մինիստրութեան մէջ հրաժարվում են հաստատել կամ հերքել այն լուրերը, թէ իբր անիշխանական դաւադրութիւն է երևան հանված։ Սակայն ոստիկանութեան կազմը ուժեղացված է։

—

Տրօա.—Գինեգործների կօմիտէտի նախագահը տեղեկացնում է, որ արիւնահեղութիւնից խուսափելու համար հասարակական հաստատութիւններից կարմիր դրօշակները հեռացնելու դէպքում՝ ազգաբնակութիւնը ընդդիմադրութիւն ցոյց չի տայ։

—

Բար-սիւր-Օբ.—Բազմաթիւ կարմիր դրօշակները և ցուցանակները մակագրութիւններով՝ հեռացվեցին հասարակական հաստատութիւնների վրայից առանց միջադէպերի։

—

Մադրիդ.—Ապրիլի 26-ին կառավարութիւնը պալատին օրինագիծ ներկայացրեց դաշնակցութիւնների մասին, որի համաձայն կրօնական հաստատութիւնները պէտք է ունենան կառավարական թոյլտուութիւնը. պետական ծառայութեան մէջ գտնվողները կարող են միութիւններ կազմել միայն այն պայմանով, որ վերջինները չը խանգարեն հասարակական կեանքի նօրմալ ընթացքը. Օտարազգիներին թոյլ չէ տրվում հիմնել Սպանիայում կրօնական միութիւններ և մասնակցել քաղաքական ժողովներին։

—

Մադրիդ.—Հանրապետական-սօցիալիստական կօմիտէտը երէկ ամբողջ Սպանիայում ցոյց կազմակերպեց զինուորական որոշումների օրէնսգրքի բարենորոգման, ընդհանուր պարտադիր զինուորական ծառայութիւն մտցնելու օգտին, նաև Աֆրիկայում ամէն տեսակ պատերազմական գործողութիւնների դէմ։ Ցոյցերն անցան հանգիստ։

Կանալէխասը յայտնեց, որ զինուորական նպատակներով Ցէուտա ուղարկվեց մի զօրամաս։

—

Բերլին.—Պաշտօնական աղբիւրներից Պետ. Հեռ. Գործ. թղթակցին հաղորդում են, որ տեղիս Պրէսս-Ցենտրալ գործակալութեան այն տեղեկութիւնը, թէ Գերմանիան վճռել է մարօկկեան ջրերն ուղարկել երեք մարտանաւ, չարամիտ յերիւրանք է։

—

Տանժէր.—Ֆէզից հաղորդում են ապրիլի 19-ից, որ կարգապահութեան և փողերի բացակայութեան պատճառով դրութիւնը վատթարացել է։

—

Դրեզդէն.—Թագաւորի և դիպլօմատիական մարմնի ներկայութեամբ հանդիսաւորապէս բացվեցին արտասահմանեան պավիլիօնները։ Թագաւորը դիտեց բոլոր պավիլիօնները, մանաւորապէս ռուսականը։

—

Մեքսիկա.—Նախագահ Դիասը պաշտօնապէս տեղեկացնում է, թէ մտադիր է հրաժարվել խաղաղութիւնն հաստատվելուց յետոյ։

—

Մեքսիկա.—Դիասի պաշտօնական ազդը ամենուրեք ցնծութիւն առաջ բերեց։ Մադէրօն այդ տեղեկութիւնն առնելուց յետոյ յայտնեց, որ կը համաձայնէ նոր զինադադարի և բանակցութիւնների վերսկսման՝ խաղաղութեան մասին։ Ապստամբների բանակում տօնախմբութիւններ են։

—

Էլպազօ.—Հիւսիսային Ամերիկայի հետ թիւրիմացութիւն չունենալու համար Մադէրօն կարգադրեց ապստամբներին՝ յետ նահանջել սահմանից։

—

Սօֆիա.—Մինիստրները Բօլգարիայի գլխաւոր քաղաքներում արտասանեցին քաղաքական ճառեր և մատնանշեցին, որ կաբինէտի ծրագրի յենակէտերն են՝ ընտրութիւնների համեմատական սիստեմ, վարչական դատարաններ, ցէնզ պաշտօնեաների համար, տնտեսութիւն բիւջէի մէջ, պրօֆէսիօնալ կրթութիւն, խաղաղասիրութիւն, տնտեսական մերձեցում Թիւրքիայի հետ։

—

Սօֆիա.—Գէշօվը Ֆիլիպպօպօլում արտասանած իր ճառում ի միջի այլոց յայտնեց, թէ ազգային մեծ ժողովը գումարվելու է յուլիսի 9-ին։

—

(Լրագիրներից)

Պետերբուրգ.—Դիպլօմատիական շրջաններում մեծ խօսակցութեան առիթ է տուել գերմանական կրօնպրինցի և նրա կնոջ առաջիկայ այցելութիւնը Պետերբուրգ։ Այդ այցելութեանը տրվում է քաղաքական խոշոր նշանակութիւն, կապելով նրան ռուս-գերմանական մերձեցման հարցի հետ։ Առհասարակ, ներկայումս կատարվում է մեծ պետութիւնների նոր խմբակցութիւն։ Այն հաւասարակշռութիւնը, որ գոյութիւն ունէր արտաքին գործերի մինիստր Սազօնովի գործունէութեան առաջին ամիսներում Պետերբուրգի և Լօնդօնի ու Բերլինի յարաբերութիւնների տեսակէտից, աստիճանաբար չքանում է, ըստ որում ռուս քաղաքականութիւնը աւելի ու աւելի թեքվում է Բերլինի կողմը։ Հարկաւոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ հակառակ լրագիրներում երևացած հերքման՝ ռուս-գերմանական բանակցութիւնները համաձայնութեան մասին իսկապէս հասցրված են նպաստաւոր վախճանի, ըստ որում պայմանագրի ստորագրութիւնը տեղի կունենայ մօտիկ ապագայում, մինչև Սազօնովի արձակուրդով մեկնելը։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
25 ապրիլ

Գիրին.—Չինական արևելեան երկաթուղու № 18 շոգենաւը լոյս ապրիլի 21-ի գիշերը Սունգարիի վրա ենթարկվեց հրացանաձգութեան։ Շոգենաւի մէջ գտնվող պահակախումբը պատասխանեց նոյնպէս կրակելով։ Ռուսաց հիւպատոսը նահանգապետից պահանջեց նշանակել քննութիւն և պատժել յանցաւորներին։

—

Խարբին.—Մանջուրիայի նոր գեներալ-նահանգապետը խորհուրդ է տալիս գահին՝ Գիրինի նահանգապետ նշանակել Դագուին։

Մանջուրական բոլոր նահանգների չին պաշտօնեաները անհամբերութեամբ սպասում են իրանց փոփոխութեան։

Այստեղով անցաւ զինուորական մինիստրը։

Պեկինից վերադարձաւ պրօֆ. Զօբօլօտնիի գիտական արշաւախումբը։

—

Պեկին.—Հրատարակվեցին մի շարք հրովարտակներ համաձայն սահմանադրութիւնը աստիճանաբար գործադրելու ծրագրի։ Հաստատվում են մինիստրների կաբինէտ և վերին խորհուրդ։

կաբինէտի նախագահ նշանակվեց իշխան Ցինգ, խորհրդի նախագահ՝ Լուինգ-Սիագ։ Նախկին պետական դիւանատունը, գերագոյն խորհուրդը և մինիստրների կոմիտէտը վերացվում են։ Գլխաւոր շտաբը ընդլայնվում է եւրոպական ձևով։ Արտաքին գործերի մինիստր նշանակվեց Լիանգ-դու-Նիէմը։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 ապրիլի

Թաւրիզ.—Մեծ քանակութեամբ հացահատիկ է ներմուծվում քաղաք։ Հացի ճգնաժամը կորցրեց իր սուր կերպարանքը։

Ուսկիւբ.—Եկան Պրիշտինա մեկնող 12 բատալիօնները։

Կ. Պօլիս.—Հաղորդում են, որ ֆինանսների մինիստրի հրաժարականը վճռական յեղաշրջման րոպէն է երկուամիա շարունակվող մինիստրական ճգնաժամի։ Ճգնաժամը, որ սկսվել էր փետրվարին, վերացրին՝ փոխարինելով ներքին գործերի և լուսաւորութեան մինիստրին և պաշտօնանկ անելով ճան. հաղորդակց. մինիստրին։ Վերջին օրերս դրութիւնը ստացաւ սուր բնաւորութիւն։ Մահմուդ-Շէվքէթ-փաշայի կիսազիջումը, որ մայրաքաղաքից հեռացրեց իր գլխաւոր գործակալ Սադըկ-բէյին, տարաձայնութիւններին վերջ չը դրեց։ Ճգնաժամը նորից է սպառնում։

Մի շարք մինիստրներ պատրաստվում են հրաժարական տալ։ Հակկը փաշայի կաբինէտում մնալու են սոսկ զինւորական, ծովային և արդարադատութեան մինիստրները։ Հաւանօրէն ամբողջ կաբինէտը in corpore կը հրաժարվի։ Այդօրինակ յեղաշրջումը վըտանգաւոր չէ, որովհետև «Մ. և Ա.» Սալօնիկի գլխաւոր կոմիտէտը խիստ թշնամաբար է տրամադրված բիւրօկրատիկ իշխանութեան վերադառնալուն, իսկ գլխաւոր կոմիտէտի անդամները կազմում է երեք եւրոպական զօրաբանակների ստորին օֆիցէրների նշանաւոր մասը։ Ի մէջի այլոց յոյս կայ, որ Սալօնիկում Փոքր-Ասիայից եկած 10,000 պահեստի զինւորների ներկայութիւնը ոչ-կոմիտէտի օֆիցէրներով կը զսպէ տեղական զօրքերին՝ հնազանդվելու Մահմուդ-Շէվքէթին։

Կ. Պօլիս.—Պալատ։ Օմարի մզկիթի կողոպտման առիթով ուղղված հարցապնդմանը վեզիրը և արդարադատութեան մինիստրը բացատրեցին, որ Պարկէրին և Վիլսօնին թոյլատրված էր նայել գանձեղէնը առանց մզկիթի մէջ պեղումներ կատարելու. այդպիսի փաստ ապացուցված չէ. նրանց արկղներում ոչինչ չէ գտնվել։ Յետագայ քննութիւնը յետաձգվեց։

Օսմանեան գործակալութիւնը պաշտօնապէս հերքում է կաբինէտի հրաժարականի լուրը։

Կ. Պօլիս.—Օմարի մզկիթի կողոպտման խնդրան պատմութիւնը հետևեալն է. Անգլիացի Պարկէրը և ամերիկացի Վիլսօնը մինիստր Ջաւիդի աջակցութեամբ թոյլտուութիւն ստացան պեղումներ կատարել Օմարի մզկիթի մօտերը։ Անաջող պեղումներից յետոյ, կաշառելով մզկիթի իմամին, նրանք մտան մզկիթը և 9 գիշեր շարունակ կատարեցին պեղումներ մզկիթի յատակի տակ։ Գտա՞ն արդեօք նրանք որևէ բան, յայտնի չէ։ Հարևանների ասելով, նրանք գտել են շատ հնութիւններ, որոնց փոխադրել են Պարկէրի զբօսանաւը և հեռացել են Թիւրքիայից։ Իմամը կալանաւորված է։ Կատարվում է քննութիւն։

(Լրագիրներից)

Երուսաղէմում Օմարի մզկիթում կատարվեց գողութիւն։ Ամերիկացի միլիօնէր Պարկէրը կառավարութեան թոյլտուութեամբ պեղումներ է կատարում Սողոմոն թագաւորի գերեզմանը երևան հանելու նպատակով։ Օմարի մզկիթը, առասպելի համաձայն, կառուցված է Սողոմոնի տաճարի փլատակների վրա։ Այս օրերս Պարկէրը մեկնեց և իր զբօսանաւով տարաւ 10 արկղ։ Շուտով պարզվեց, որ մզկիթի ստորերկրեայ պահարաններում գտնվող շատ թանգագին իրեր անյայտացել են։ Մահմեդականների մէջ սկսվեց յուզմունք։ Օմարի մզկիթը մահմեդականների համար երկրորդ սրբատեղին է Մէկկայից յետոյ։ Փորձ եղաւ սկսել քրիստոնեաների ջարդ։ Իշխանութիւնների իր ժամանակին ձեռք առած միջոցներով կարելի եղաւ անկարգութիւնների առաջն առնել։ Սպանված են երկու քրիստոնեաներ։ Սկսված է քննութիւն։

Թիւրքաց պատգամաւորների պալատը Օմարի մզկիթում կատարված գողութեան առիթով պետութեան ամէն կողմերից ստանում է զայրոյթի հեռագիրներ։ Լուրերին նայած, Պարկէրը յափշտակել է ի մէջի այլոց Սողոմոն թագաւորի թուրը և թագը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 21 ապրիլի

Ամէն օր նոր դէպքերի և փոթորկաբեր լուրերի հանդէպ ենք կանգնած լինում։ Յայտնի է արդէն, որ թիւրքերը գրաւել ու նստել են մեր երկրի արևմտեան սահմանածայրի տեղերը՝ Սուլդուզ, Բարանդուզ, Սօվուջ-Բուլաղի շրջակայքը և Ուրմիի մօտիկ գիւղերը։ Ունեն բաւականին զօրք և անգամ թնդանօթներ։

3—4 օր առաջ Միանդաբից հեռագիր ստացվեց, որ մինչև այսօր եղած տեղն անյայտ՝ նախկին շահ Մահմէդ-Ալիի եղբայր Սալար-ուդ-Դօվլէն, որ Մահմէդ-Ալի շահի օրով ապստամբեց իշխանութեան դէմ եղբօրից գահը խլելու ծրագրով, նախանցեալ տարի գալով Թէհրան՝ այնտեղից ևս քշվեց, incognito՝ ծպտված վիճակով երևան է եկել Սուլդուզի և Սօվուջ-Բուլաղի սահմաններում, գալով ուղղակի Թիւրքիայից, թիւրք ջոկապանների և զինւորների ուղեկցութեամբ։ Սալար-ուդ-Դօվլէն Րէվանդուզից անցաւ Սուլդուզ և այցելեց Մահմէդ Սալիհ խան Էզամ-իւլ-Միւլքին, որն ազդեցիկ անձնաւորութիւն է։ Նա երկար խօսակցել է նրա հետ և ապա գնացել է Սօվուջ-Բուլաղի դատաւոր Մէհմէդ Հիւսէյին խան Սարդար Միւքրիի և ուրիշների մօտ։ Այս վերջինիս բացարձակապէս յայտնել է, որ ինքը Սալար-ուդ-Դօվլէն է, թէ մի քանի օրից յայտնելու է իր կատարելիք գործը։ Այնտեղից այցելեց ազդեցիկ մօլլաներին և նրանց հետ ունեցաւ խօսակցութիւն և տուեց քաղցր խոստումներ։ Ամբողջ շրջակայութեան ժամանակ Սալար-ուդ-Դօվլէին առաջնորդում էր Սուլէյման խան Շուջա-ուդ-Դիվանը, որ մի ժամանակ նրա ծառան էր։ Մօլլաներին այցելելիս սերտ մտերմութիւն ցոյց տուեց Շէյխ Ալի խան Շուջա-իւլ-Մէմալիքին ու նրան ևս յայտնեց, որ ինքը Սալար-ուդ-Դօվլէն է և ունի մեծամեծ ծրագիրներ ի գործ դնելու համար։ Վերոյիշեալ պտոյտներից յետոյ գնաց թիւրք զինւորական մեծ պաշտօնեայ կայմակամի մօտ և այնտեղից ուղևորվեց Մակու, սարդար Իղբալ-ուս-Սալթանէի մօտ, ուր հաւանօրէն գտնվում է այժմ, յանձին Մակուի սալարի գտնելով յարմարագոյն մի գործակից ծրագիրները լոյս աշխարհ դուրս բերելու համար։

Թէ սահմանածայրերում կազմակերպվում են մօտալուտ բարդութիւններ ու փոթորիկներ, այդ ամէն կասկածից վեր է։ Ի՞նչ է մտածում արդեօք կենտրոնական կառավարութիւնը, թափանցել դժուար է....

Հացի խնդիրը ոչ միայն Թաւրիզում, այլ և ուրիշ տեղերում ևս օրվայ հրատապ չարիքն է։ Թաւրիզում փոքր առ փոքր հացը շատանում է, սակայն տեսակը գրեթէ նոյնն է։ Ամբոխի համբերութիւնը հեռու չէ, որ կատաղութեան հասնի։ Հինգ օր առաջ անջումանի այալաթի և կառավարութեան դռների վրա փակցվեցին սպառնալից պրոկլամացիաներ։ «Մենք սովերից ևս չենք վախենում. ծանր ու անպատասխանատու դրութիւն առաջ կը բերենք, եթէ շարունակվի այժմեան դրութիւնը»—ասում են դժգոհ քաղցածները։ Արդաբիլում հաց չը կայ. միւս կողմից շահսէվանները անպատիժ յափշտակում են և թալանում քաղաքը, գիւղերը։

Մեր թղթակցութիւնների մէջ պատեհութիւն ունեցել ենք գրելու, որ յեղափոխութեան օրերի մուջահիդները ցաւ ու փորձանք են դառնալու պետութեան գլխին։ Միևնոյն տագնապի մէջ է այսօր երկիրը։ Թէհրանում, Թաւրիզում թէ ուրիշ վայրերում մուջահիդները դեմօկրատ անունի տակ յուզմունքներ ու շփոթութիւններ են սարքում և դարդ են եղել իշխանութեան գլխին։

Անհասարակ Պարսկաստանում օրէ-ցօր, ժամ առ ժամ ստուարանում է դժգոհների թիւը ընդդէմ տիրող րեժիմի։ Խոյում 3 օր է խանութ, բազար փակել են՝ այսօրվայ րեժիմի դէմ հանդէս բերելով այս ցոյցը իբրև խիստ բողոք։ Խոշոր դժգոհութիւններ են արտայայտվում նաև Թաւրիզի անջումանի և Մուխբիր-ուս-Սալթանէի դէմ, որոնք բացայայտ կռիւ են մղում կենտր. կառավարութեան դէմ։ Անջումանի ընդդէմ գոյութիւն ունեցող դժգոհութիւնը ունի իր հիմքը։ Բացի նրանից, որ անջումանի անդամները՝ իրանք, լինելով ցորենատէրեր, չը նպաստեցին ներկայ վիճակի բարեփոխմանը, այլ և գործում են առանց խելացի տակտիկայի, չը լսելով կենտր. կառավարութեան ոչ մի կարգադրութեան ու հրահանգին և շատ անգամ անցնում են օրինականութեան սահմանը, միևնոյն ժամանակ ոչ մի բարիք ցոյց չը տալով ժողովրդին։

Այսօր յամառ լուր է տարածված քաղաքում, որ Թէհրանում տեղի են ունեցել ինչ-որ դէպքեր և խնամակալին արձակել են գնդակ։ Այս լուրը վերապահութեամբ եմ հաղորդում, սպասելով հաւաստի տեղեկութիւնների։

Աստրաբադից նոյնպէս կան չարագուշակ լուրեր. արդեօք քնութեան սարսափներ են թէ քաղաքական փոթորիկ, յայտնի չէ. պէտք է սպասել ստոյգ տեղեկութիւնների։

Հայկազուն

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 14 ապրիլի

Վան են հասել տեղիս զինւորական հրամանատար Մուխլիս և նրա օգնական Ջաբար փաշաները. մի քանի օրից էլ կը հասնի վալիի փոխանորդ Նազըմ-բէյը։ Վանը դարձել է օսմանեան XI բանակի կենտրոնը, էլ չէ ենթարկվում Երզնկայի բանակին, որ օսմ. IV զօրաբանակն էր համարվում և իշխում էր Անատօլուի հիւսիսային մասին—ռուս. և պարսկ. սահմանագծի վրա։ Սրանից յետոյ օսմ. բանակը պիտի բաղկացած լինի 14 կիսաբանակներից, որի XI-ը Վան պիտի նստէ։

Մամրդանի գաւառակում կատարված չորս հայերի սպանութեան հեղինակներից ձերբակալել են, ասում են, միայն մէկին, նոյն գաւառի Թահիր աղայի մի նկնահասակ որդուն, որին իբրև անչափահաս, ուզեցել են բաց թողնել, բայց այդ դեռ չէ աջողվել. գուցէ կաջողվի դատավարութեան ընթացքում, ինչպէս եղաւ Ադիլջևազի 6 հայերի սպանիչների համար, որոնցից միայն հինգը 3—6 տարով դատապարտվեցին, ինչպէս գրել եմ նախորդ թղթակցութիւններիցս մէկում։

Մտրակ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Երիտ.-թիւրքերի կառավարութեան երկու հոսանքների միջև տեղի ունեցող պայքարը—հոսանքներ՝ որոնցից մինը է կազմում է՝ պահպանողականը ազգայնական, իսկ միւսը՝ արմատական—վերջացաւ նրանով, որ կատարվեց մի իսկական coup de théâtre որը մտածված կերպով և տեղին գործադրըվեց առաջին հոսանքի ներկայացուցիչների կողմից։

Ապրիլի 9-ին (ն. տ. ապրիլի 22) Կ. Պօլսում կայացաւ մի աղմկայոյզ նիստ, երիտասարդ-թիւրքերի պարլամենտական ֆրակցիայի 178 պատգամաւորների մասնակցութեամբ, որոնց թւումն էին և երկու մինիստրներ, որոնք այդ կուսակցութեան անդամներից են։

Նիստը բանալուց յետոյ պահպանողական փոքրամասնութիւնը պահանջեց «Մ. և Ա.» կուսակցութեան ծրագրին կցել 10 կէտերից բաղկացած մի նոր ծրագիր, առանց վիճաբանութիւնների ու քննադատութիւնների, որպիսի պահանջը աննկարագրելի չափերի հասնող վատ տպաւորութիւն գործեց ժողովականների վրա, որին հետևեց յիշեալ կուսակցութեան պարլամենտական ֆրակցիայի՝ Թալէաթ բէյի դէմ ուղղած բողոքը, որը անընդունելի հռչակեց նոր ծրագիրը։ Այսպիսի յայտարարութիւնը առաջ բերեց բուռն վիճաբանութիւն, որից յետոյ որոշվեց քննութեան նիւթ դարձնել նոր առաջարկված յաւելուածը, որը տևեց աւելի քան 5 ժամ։

Սրա արդիւնքն եղաւ այն, որ մեծամասնութիւնը վիճեց և ընդունեց այդ 10 կէտերն ևս։

Այս նոր կէտերի ոյժով, պատգամաւորները պարտաւոր են չը մասնակցել կօնցէսիաներին, և չը միջնորդել նրանց օգտին։

Կուսակցութեան անդամները կարող են մինիստրական պորտֆէլներ ստանալ ոչ այլապէս, քան ֆրակցիայի անդամների $^2/_3$ մասի համաձայնութեամբ։

Կուսակցութիւնը պէտք է պահպանէ կրօնական և ազգային սովորութիւնները։

Գերագոյն իշխանութեան իրաւունքները պիտի ընդարձակվեն, որպէսզի հաւասարակշռութիւն ստեղծվի քաղաքական բոլոր գործօնների միջև։

Մեծամասնութեան յանկարծակի ենթարկումը փոքրամասնութեանը՝ արդիւնք է զինւորական մինիստր Շէվքէթ փաշայի միջամտութեամբ, որը իբր թէ յայտնել է երկու կողմերին ևս, որ ինքը թոյլ չի տայ ներքին ճգնաժամի ընդարձակ ծաւալ ստանալը և հարկ եղած դէպքում նոյն իսկ կը դիմէ դիկտատօրական միջոցների։

Այս սպառնալիքին բոլորն էլ հաւատ ընծայեցին, գիտենալով ընդհանուր հրամանատարի վճռական բնաւորութիւնը, մանաւանդ երբ յիշեցին, որ նա Ալբանիա ուղարկվելիք 35 բատալիօնները պահել է Կ. Պօլսում, ներքին անկարգութիւնների դէպքում գործի հանելու համար։

Ֆրակցիայի նիստից յետոյ յայտարարվեց քաղաքագիտօրէն կազմված մի ծանուցագիր, որը ասում է, թէ ֆրակցիայի մէջ ոչ մի անհամաձայնութիւն չէ տիրում, այլ ընդհակառակը տիրում է կատարեալ համերաշխութիւն, որին իբրև ապացոյց կարող է ծառայել այն, որ 10 նոր կէտերը ընդունվեցին միաձայնութեամբ։

Սակայն այսօրինակ յայտարարութեանը ոչ ոք հաւատ չընծայեց, որովհետև ամենքի համար պարզ էր, որ ապրիլի 9-ին յաղթանակեց կղերա-պահպանողական փոքրամասնութիւնը։

Սրա արդիւնքը եղաւ այն, որ կղերական տարրերը նորից սկսել են գլուխ բարձրացնել, որպիսի հանգամանքը լուրջ սպառնալիք է գուշակում Թիւրքիայի քաղաքական կեանքի համար։

Այլապէս ինչո՞վ բացատրել այն, որ պարլամենտը վերջերս ընդունեց մի շարք յետադիմական ոգի կրող որոշումներ, որոնց մէջ գլխաւոր տեղ է բռնում շարիաթի և խալիֆաթի պահպանումը։

Զօրքերի մէջ կատարվում է ուժեղ ագիտացիա. ագիտատօրները մեղադրում են կոմիտէտին, որ նա մոռացել է կրօնական սովորութիւններն ու չափազանց կերպով ենթարկվել եւրոպական նորամուծութիւններին։

Օֆիցէրները համախմբվել են գնդապետ Սադըկի շուրջը (նախկին անդամ Սալօնիկի կոմիտէի), որոնք իրանց նշանաբան են ընտրել՝ «Կռիւ անհաւատութեան, մասօնութեան և սիօնիզմի դէմ»։ Յետադիմականների յաղթանակը կարող է վատ հետևանքներ ունենալ և կարող է միջազգային բարդութիւններ առաջացնել։ Այդպիսի երկիւղ կայ մանաւանդ Անգլիայի կողմից, որի դեսպանութեան խորհրդական Ֆից-Մօրիսի դէմ յարձակումներ են տեղի ունենում։ Այս ամէնի արդիւնքն այն եղաւ, որ պարլամենտական ֆրակցիայի մէջ Թալէաթ-բէյ հրաժարվում է ֆրակցիայի նախագահութիւնից, չը կամենալով ենթարկվել յաղթողներին։

Լուրեր են պտտում, որ կաբինէտը կարող է ընկնել, որին կը յաջորդէ նոր կաբինէտ՝ մեծ-վէզիրութեամբ Հիլմի փաշայի։

Վերջին տեղեկութիւնները հաղորդում են, որ ամսիս 18-ին տեղի է ունեցել «Մ. և Ա.» կոմիտէի նիստը, նոր բիւրօ ընտրելու համար։

Ներքին գործերի մինիստր Բուլիլ-բէյը արցունքն աչքերին խնդրում էր նիստին մասնակցողներից՝ չը հերձուածել կուսակցութիւնը, որովհետև երկրին սպառնում է վտանգ։ Ընտրութիւնները յետաձգվեցին երկու շաբաթով, ի նկատի ունենալով ծրագրային տարաձայնութիւնները, որոնք քննութեան կառնվեն այն կօնգրէսում, որ տեղի կունենայ առաջիկայ ամառը։

Պարզվում է, որ հերձուածը վաղուց ի վեր էր պատրաստվում, որի գլուխ էր կանգնած Սադըկ բէյը, որը ներկայիս, իբրև վտանգաւոր մէկը, տեղափոխված է Սալօնիկ։

Դրութիւնը յուզալի է։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՅՈԲԵԼԵԱՐ ԵՒՍ, ԵՒ ԳՈՒՑԷ ԱՄԵՆԱՀԱՄԱԿՐԵԼԻՆ

Մի յոբելեար ևս և գուցէ ամենահամակրելին։

Դա Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնն է։

Մայիսի 29-ին ս. Խաչ վանքում կատարվելու է այդ ընկերութեան 50-ամեայ յոբելեանը։

Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը մեր ամենահին ընկերութիւններից է։

Նրա կանոնադրութիւնը յօրինել է Ստեփանոս Նազարեանը։

Նրա 25-ամեակի պատմութիւնը գրել է Գամառ-Քաթիպան։

Երկու մեծ անուններ՝ երկու մեծ հայերի։

Եւ երկար ու ձիգ 50 տարիներ մեր Ընկերութիւնը վայելել է ժողովրդի յարգանքը և սէրը։

Բարեգործական նպատակով նա ծախսել է 200,000 րուբլի։ Առաջին տարիները անդամները ծախսում էին քիչ, աշխատում էին աւելացնել մայր և պահեստի գումարները։ Վերջին 20 տարիները մենք ծախսում ենք աւելի, քան թէ ունենք եկամուտ. և սակայն մեր պահեստի դրամագլուխը հասնում է 65 հազարի, մայր գումարն է 4,000 րուբլի։

Բարեգործական Ընկերութիւնը առանց խտրութեան օգնել է ամեն մի հայի, լինէր նա նախիջևանցի, թէ կովկասցի, ողջ մէկ է, և արձագանք է տուել հայկական կեանքի բոլոր թէ փոքր, թէ մեծ երևոյթներին։

Նա կանգնել է տեղիս դպրոցի շէնքի երկրորդ յարկը, ծախսելով միանուագ 10,000 րուբլի։

Նա լոյս է ընծայել Գամառ-Քաթիպայի անտիպ երկերը։

Նա լոյս է ընծայել մեծ երկհատորով Միքայէլ Նալբանդեանի բոլոր երկերը։

Նա տուել է և տալիս է ուսում հազարաւոր հայ մանուկների։

50 տարվայ միջոցին շատ արտասուք է նա սրբել, շատ վէրքեր բուժել, շատ ցաւեր դարմանել և թեթևացրել։

Բայց գլխաւոր նպատակը, ամենամեծ նպատակը եղել է և կը մնայ տարածել լոյս, հալածել հայկական խաւարը։

Մայիսի 29-ին Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքում կատարվելու է Ընկերութեան յոբելեանը։

Յարգենք նրան, պատւենք սիրով, երախտագիտական բուռն զգացմունքով։

Հանենք գլխարկներս և ցածր-ցածր խոնարհենք մեր գլուխները յոբելեարի առաջ։

Նա հասել է մեզ մեր տրտմութեան և թշուառութեան ծանր օրերին։

Լինենք նրա հետ նրա ուրախութեան օրը։

Նա մեր ամենահամակրելի յոբելեարն է։

Գր. Չալխուշեան

Նոր-Նախիջևան

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Երկուշաբթի, ապրիլի 25-ին, կայացաւ քաղաքային դումայի նիստը։ Հանգուցեալ Ալ. Մանթաշեանի յիշատակը յարգելուց յետոյ, քաղաքագլուխ Ալ. Խատիսեան յայտնեց, որ Կովկասի Փոխարքայի ներկայացուցիչը Պետերբուրգում, սենատոր Նիկոլսկին հեռագրել է, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կասսօն յարգել է Փոխարքայի միջնորդութիւնը՝ թոյլ տալ և Թիֆլիսի քաղաքագլխին մասնակցել ձ նի իրաւունքով այն պաշտօնական խոր դակցութեան, որ պէտք է կայանայ տերբուրգում և որը պէտք է քննէ Թի սում համալսարան բանալու հարցը։ Ո հետև այդ խորհրդակցութիւնը կայան է այս ապրիլի 30-ին, երեկոյեան, ա անհրաժեշտ է, որ Թիֆլիսի ներկայա ցիչը՝ քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը կոյն և եթ ճանապարհ ընկնէ Պետեր որպէս զի կարողանայ հասնել խորհր ցութեան։ Յայտնելով այս մասին քաղա գլուխը կցեց, որ ինքն ճանապարհ է նելու միւս օրը առաւօտեան, ապրիլի 26 Դրա հետ միասին նա յայտնեց, որ Փոխա քան հեռագրով յայտնել է սենատոր Նիկ սկին, որ նա պնդում է, որպէս զի Թի լիսում բացվի համալսարան և ոչ պոլիտ նիկում, որովհետև համալսարանը կարել պոլիտեխնիկումի վերածել, մինչ պոլիտ նիկումը չէ կարելի համալսարանի վերած

Խատիսեանը պէտք է աշխատէ, որ խոր հրդակցութիւնը վերջնականապէս կա նայ որոշել, թէ Թիֆլիսում համալս բանալու համար ինչքան գումար է պահ վում Կովկասի ազգաբնակութեան կող կտրական կերպով։

Ապա դուման անցաւ հերթական հա րի քննութեան. ի թիւս այլոց նա ընդ նեց վարչութեան առաջարկը՝ հրաւիրել տերբուրգից հաշուապահական գիտութի ների պրոֆեսոր Սիվերսին գալ Թիֆլիս քաղաքային վարչութեան հաշուապահակ մասը կարգի բերել, մի անգամ ընդ մի որոշելով այն սիստեմը, որով պէտք է վի քաղաքային տնտեսութեան հաշուա հութիւնը։ Պրոֆեսոր Սիվերսի վարձատր թեան համար դուման որոշեց տալ նրա հանջած գումարը՝ 5,000 րուբլի։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ընթացիկ կեանքը Կրասնօվօդսկում

Կրասնօվօդսկ, 23 ապրիլ

Երէկ, ամսիս 22-ին, երեկոյեան ժ 9-ին քաղաքիս Բազարնայա հրապարակո գտնվող էլեկտրօ-բիօգրաֆ պրօժեկտօրու որտեղ ցոյց են տրվում սինեմատօգրաֆ յին նկարներ, հանդիսականներից մի եր տասարդ, ազգով ռուս, գնդակի մի հարու ծով վերջ տուեց իր կեանքին։ Ինչպ պատմում են, դէպքը տեղի է ունեցել ժամանակ, երբ սկսել են նուագել «Тоc по родинѣ» եղանակը հէնց իր՝ սպանվ խնդրանօք. ենթադրում են, որ արբած եղել...

Բաքուից տեղս են եկել ամուսիններ բովեան դերասանները և մտադիր են տեղ դրամատիկ արուեստի սիրող և սիրողու ների մասնակցութեամբ մի ներկայաց տալ և ապա անցնել Բենդեր-Գեազ։

Շնորհիւ դաժան ձմրան երկարատև տերին՝ կենսական մթերքների սաստիկ կաւութիւն է զգացվում, մանաւանդ որի սակագինը բարձրացել է մինչև նոյն իսկ 30 կ., այն էլ չէ ճարվում։

Այժմ եղանակները տաքացել են. բուստ դասակարգը իր ամառանոց գնա վայրն է ընտրում, իսկ աղքատ դաս կարգը ամառվայ տօթերին իր առօրեայ բէնի հայթայթման հոգսն է քաշում...

Զ.-Ն.

Կենսական մթերքների թանգութիւնը Հադրութում

Հադրութ, 20 ապրիլ

Սաստիկ ձմրան ետևից յուսատու կենսա բեր գարունն էլ եկաւ, բայց գիւղացիների համար ոչ սովորական գարուն։ Քանի ձմեռ էր, գիւղացիները այն յուսով ապրում, թէ շուտով կը գայ գարունը իրանք ձմրան նեղութիւններից ու հոգս բից կազատվեն. այժմ այդ յոյսն էլ կտրվե

Կարեւագին գաւառի աշնանացանքը նոտ մասերում ընդհանրապէս, իսկ դաշտա յին մասերում տեղ-տեղ բոլորովին փչա ցած է։

Գիւղացին հնարաւորութիւն չունի գար նանացանքս անելու, որովհետև լծկան ու գամէշ չունի։

Գաւառիս հայ թէ թուրք գիւղացիների անասունների մեծ մասը խոտի ու դարմա նի պակասութիւնից փչացել է. իսկ մնա ցածները ոյժ չունեն գիւղացու ցանք պէտք գալու։ Սպառնում է սաստիկ թան գութիւն, թէև ներկայ ժամանակս մխիթարական ոչինչ չը կայ. ցորենի պութը 2 ր. 10 կ., գարին 1 ր. 90 կ., գար 2 ր., տաւարի մսի ֆունտը 15 կ., բինը 25 կ.։ Սրանք էլ մեծ դժուարու թեամբ են ճարվում։ Միայն շաքարն էր էժան, այն էլ թանգացրին։ Այժմ հարց է, թէ գիւղացին այսպիսի հանգամանքներում ի՞նչպէս կարող է իր գոյութիւնը պահպա նել, քանի որ իր աշխատանքը և քրտինքը փչացել են և այսպիսի դժուարին հանգա մանքներ առաջ եկել։

Եւլախ կայարանից մինչև Հադրութ ալիւ րի և ուրիշ ապրանքների պութը բերում են 1 րուբլի. ուրեմն որքան էլ էժան լինեն ալիւրը կամ ապրանքները Եւլախում, գար ձեալ մեր գիւղացիների համար թանգ են. այս անխղճանելի դրութիւնը շատերին յու սահատեցրել է, որոնք և գաղթում են օ տար քաղաքներ նոր բաղդ որոնելու։ Գիւ ղացիները նոր են հասկանում երկաթուղու մօտիկութիւնը և կարևորութիւնը, որ եթէ մօտիկ լինէր երկաթուղին, չէին փչանայ այնքան անատեններ և այսպիսի նեղ դրութիւն առաջ չէր գալ: Կառավարութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում գիւղացիների նեղ դրութեան մասին հոգալու:

Նորայր ք. Տէր-Մովսիսեանց

ԿԱԹՈՂ. ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Ցարսկիէ-Կոլօդցի, 22 ապրիլի

Մեր կողմից կաթողիկոսական պատգամաւորի ընտրութեան համար պատուիրակներ ընտրվեցին Քրիստափոր Տէր-Աստուածատրեան և Մարտիրոս Սելգիրեան:

N. N.

ԲԱԳՈՒԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ*)

Բագու, 20 ապրիլի

Անցեալ անգամ ինչպէս հաղորդել էի, տեղիս քաղաքային 80 ձայնաւորների և 16 թեկնածուների ընտրութիւնը վերջացաւ նրանով, որ ընդամենը ընտրվեցին 22 հոգի, 12 Թուրք (Հաջիի պարտիայից), 2 հայ և 8 զանազան ազգի քրիստոնեաներ. պակասում էին 74 ձայնաւոր և թեկնածու, որոնց ընտրութիւնը նշանակված էր այսօր քաղաքային տան մէջ:

Այս անգամ Հաջին ընտրվում է ստանալով միևնոյն ժամանակ մօտ 500 սև քուէ: Ո՞վ կը համարձակվէր Հաջիի սեւին սպիտակ ասել... Բայց ասացին. բայց եթէ հայերը վերոյիշեալ 52 ձայնաւորների ընտրութեան օրը (ս. թ. մարտի 30-ին) Թաղիեվին սև քուէ տային, այն ժամանակ Հաջին ոչ թէ 500-ից մօտ սև քուէ կը ստանար, այլ 800-ից էլ աւելի, հետևաբար և լիակատար կը սևանար: Հաջին սև տուին միմիայն Թուրքերը, եթէ չը հաշւենք, եթէ եղել են, 10—20 հայերին:

Մալականները անցեալ անգամ բացէ ի բաց՝ ինչպէս հայերին և ռուսներին՝ նոյնպէս և Թաղիեվի հակառակորդ Թուրքերի մի մասին կատարեալ դաւաճանեցին: Նրանք այդ օրը մինչև անգամ 10—25 ր. փող առան, որպէսզի ճաշելու չը գնան, ձայն տալուց չը զրկվեն, կուշանան ժամանակից, բայց դարձեալ բեաբաբ-չօրաք ուտելուց յետոյ սև քուէ տուին, չը նայելով որ այդ 10—25 րուբլին հայի փող չէր, այլ աչքից ընկած Թաղերից սկզբնական ծախսերի համար ժողոված յայտարարութեան և այլն: Այսօր, ամսիս 20-ին միայն պարզվեց, որ մալականների հաշին (Սկոբելևը) նրանց կարգադրել է, որ Թուրքերին սպիտակ քուէ տան, իսկ քրիստոնեաներին՝ սև:

Ընտրութիւնից մի քանի օր առաջ, ամսիս 17-ին, կիրակի օրը քաղաքային ձայնաւորների հայ ընտրողների մի խումբ, պ. պ. Հ. Բ. Տէր-Միքայէլեան, Կ. Իվ. Խատիսեան, Մ. Գ. Ալիբէգեան, Ա. Խ. Սերեբրեակեան և Տ. Բուդաղեան, առանձին թերթերով նախապատրաստական ժողովի էին հրաւիրել տեխնիքական ընկերութեան շինութեան մէջ: Այդ ժողովում ծեծվեցին մի շարք հարցեր: Մի հայ, թէև գործիչի անուն վաստակեց, նորից առաջարկեց ներկայ գտնվող 200-ից աւելի հայերին և ռուսներին, որ նորից բլօկ կազմեն Սաֆարալիեվի և Հաջիեվի պարտիաների հետ, որոնք 400-ից աւելի ձայն ունեն: Եթէ այդ «գործիչ» պարոնը այդ սաէր խաբվելուց 3—5 տարի յետոյ, գուցէ ժողովականները ընդունէին, բայց ընդամենը ամիս չը կայ կազմված բլօկին դաւաճանելը. ուստի հայերը և ռուսները կտրական կերպով մերժեցին:

Իսկ Թաղիեվի պարտիան մի այլ, Թուրքերէն հրատարակած, թռուցիկ էր արձակել (հայերի և ռուսների թռուցիկ-թերթիկները տպագրվում են սկզբից ռուսերէն, ապա հայերէն), որի մէջ յայտարարվում էր, որ Սաֆարալիեվի և Հաջիեվի պարտիաները քաղաքը վաճառել են հայերին:

Ահա տեղի ունեցած ընտրողական պայքարի բովանդակութիւնը մարտի 30-ից մինչև ապրիլի 20-ը:

Եկաւ ընտրութեան օրը:

Քաղաքացիները, մանաւանդ քրիստոնեաները սառնասիրտ ներս են մտնում քաղաքային շէնքը: Անցեալ անգամվայ խօսակցութիւնը, պրօպագանդան չը կայ, այլ ևս չեն հրում իրարու, սառնասիրտ նստում են շարված աթոռների վրա, խօսում են զանազան հարցերից, բայց ոչ ընտրութիւնից:

Ցերեկվայ ժամը 12-ին մօտ քաղաքագլուխ Ռաեվսկին ուրախ և առոյգ ձայնով ժողովը բացված յայտարարեց՝ կարդալով յօդուածներ ընտրութիւնների օրինակատարութեան վերաբերեալ: Ապա կարդաց թեկնածուների անունները, որոնց թիւը 108 էր—14 հայեր, 28 ռուսներ և մալականներ ու այլ քրիստոնեաներ և 67 մահմեդականներ: Իսկ կանդիդատների թիւը, որոնցից պիտի ընտրվէին 16 հոգի, ընդամենը 37 էր, որոնցից 10 հայ, 14 ռուս ու այլ քրիստ. և 13 Թուրքեր:

Ուրեմն բոլոր ընտրողների թիւը 116-ի էր հասնում, որոնցից 66 քրիստոնեաներ, իսկ 80 մահմեդականներ:

Որքան զարմացաւ քաղաքագլուխը իր համախոհների հետ, երբ տեսաւ, որ փոքր ի շատէ աչքի ընկնող քաղաքացիք հրաժարվեցին ընտրվելուց և առաջարկեցին իրանց անունով դրված քուէտուփերը վերցնել:

Հրաժարվեցին 66 քրիստոնեաներից 53 հոգի, ինչպէս բոլոր հայերը (24 հոգի), նոյնպէս և ռուսները, վրացիք և այլն (29 հոգի). քրիստոնեաներից միայն 13 հոգի՝ մի քանի մալականներ և ռուսներ, որոնք իրանք էլ չը գիտէին թէ ով է իրանց թեկնածութիւնը դրել և ինչու համար:

Այդ էր, որ մի շարժում անցաւ քաղաքացիների գլխով. այստեղ բացվեց՝ թէ մարտի 30-ից մինչև ապրիլի 20-ը ինչպիսի մտքերի փոխանակութիւններ են տեղի ունեցել:

Սաֆարալիեվի և Հաջիեվի պարտիաները ուշքի գալով իրանք էլ ընտրվելուց հրաժարվեցին, իսկ շատ Թուրքեր ի նկատի առնելով թեկնածուներից շատերի անգրագիտութիւնը, տգիտութիւնը, իրանք էլ հրաժարվեցին քուէարկվելուց՝ տրտնջալով, որ չեն կարող համբալների հետ քաղաքի շահերը կառավարել, պաշտպանել:

Հետևանքն այն եղաւ, որ 146 ընտրողներից միայն հրապարակում 39 հոգի, որոնց և քուէարկեցին:

Հայկ Բ. Տէր-Միքայէլեան. — Խնդրում ենք յայտարարել անցեալ օրվայ ընտրվածների ցուցակը:

Քաղաքագլուխ.—Այդ խնդիրը կապ չունի այսօրվայ ընտրութեան հետ:

Ապա Տէր-Միքայէլեանը խնդրում է մտցնել արձանագրութեան մէջ, որ քաղաքագլուխը մերժեց յայտնել մարտի 30-ին ընտրված 22 ձայնաւորների անունները:

Այնուհետև մինչև քուէարկութիւն սկսելը նորից Տէր-Միքայէլեան վէճ ունեցաւ քաղաքագլխի հետ և վերջինիս գրաւոր յայտարարութիւն ներկայացրեց:

Ընտրութիւնների թիւը 1069 հոգի էր. (անցեալ անգամ 1356). 39 թեկնածուներն էլ սևացան. ամենաշատ ձայն ստացողը 400-ի չը հասաւ:

Երբ քուէները սկսեցին համարել և առանձին ցուցակով ներկայացրին քաղաքագլխին, վերջինս իր ձեռքով թւերը գրելուց յետոյ սկսեց պաշտօնապէս յայտարարել, մէկիկ-մէկիկ կարդալ, թէ ով որքան սև ու սպիտակ քուէ է ստացել: Ընթերցումը աւարտելուց յետոյ քաղաքացիները ծափահարեցին «բրաւօ, բրաւօ» գոռալով ու բարձրաձայն ծիծաղելով:

Այդ՝ պ. Ռաեվսկին դուր չեկաւ. նա վըշտացած, սնանկացած վաճառականի նման յուսահատված, ձեռք ու ոտքերը թուլացած՝ կարգապահութեան հրաւիրեց քաղաքացիներին, որոնք՝ հայ, Թուրք, ռուս և այլն՝ ուրախ-ուրախ, քրքջալով, խմբերով թեանցուկ հեռացան քաղաքային տնից՝ թողնելով քաղաքագլխին տխուր և տրտում:

Այդ ընտրութիւնը Բագուի բոլոր ազգերի մեծամասնութեան կողմից մի ապտակ էր Պուրիշկևիչին, նրա՝ «Баку» լրագրին տուած հեռագրի արժանի պատասխան:

Այժմ հաւանական են համարում առաջին ընտրութիւնն էլ բեկանել և նորից ընդհանուր ընտրութիւն նշանակել՝ դնելով նախկին ընտրութեան ժամանակ սևացած հայերի և Թուրքերի թեկնածութիւնը նորից:

Իսկ աւելի ցանկալին կը լինէր Թաղային ընտրութիւնը, որը մեծամեծ առաւելութիւններ ունի և որը ցանկանում է բոլոր քրիստոնեայ ազգաբնակութիւնը:

Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեան երէկ առաւօտեան մեկնեց Պետերբուրգ Կովկասի Փոխարքային ներկայանալուց և նրա հաճութիւնը առնելուց յետոյ՝ մասնակցելու այն առանձին խորհրդակցութեան, որ կազմվել է կովկասեան համալսարանի հարցի բազմակողմանի լուսաբանութեան համար:

◆ Ներկայումս Թիֆլիսումն է Յ. Բ. Յարութիւնեան, որ նուիրել է 200,000 րուբլի արժեցող մի տուն գիւղատնտեսական դպրոց հիմնելու համար Հին-Նախիջևանում: Մենք կը հաղորդենք մի քանի տեղեկութիւններ այդ նուիրատուութեան մասին:

◆ Գէորգ (Նախկին Եղիշէ վարդապետ) Մուրադեան վաղը, հինգշաբթի, ապրիլի 28-ին, կը կարդայ զեկուցում Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան ընդհանուր ժողովում: Նրա զեկուցման ծրագիրն է՝ անջրդի հողերի տարածութիւնը Արաքսի աւազանում և նրանց ջրելու հնարաւորութիւնը: Զեկուցանողը վերջին ամիսներում զբաղված էր Նախիջևանի շրջանում ջրի պաշարներ ուսումնասիրելու խնդրով և ջուր հանելու գործով: Նա ժողովել է նիւթեր, որոնց մի մասը կը հաղորդէ իր զեկուցման մէջ:

◆ Քաղաքային վարչութիւնը արդէն հրաւիրագրեր ուղարկեց Կովկասի բոլոր քաղաքների ինքնավարութիւններին, առաջարկելով ներկայացուցիչներ ուղարկել այն համագումարին, որ կայանալու է Թիֆլիսում առաջիկայ մայիսի 26-ին հակախօլերային և հակաժանտախտային ձեռնարկութիւնների խնդիրների համար:

◆ Ապրիլի 24-ին Ժողովրդական Համալսարանի Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովում ընտրվեց հետևեալ նոր վարչութիւնը. Րցխիլաձէ, Մկրտումեան, Ջիօեվ, Գելէյշվիլի, Բերուբիշվիլի, Ե. Ն. Արղութեան - Երկայնաբազուկ, Բօխլենա, Կարցիվաձէ, Քաթանեան, Մեսխիեվ, Չէլիձէ, Բարատով և Դիասամիձէ:

◆ Ապրիլի 25-ի երեկոյեան կայացաւ Ժողովրդական համալսարանի վարչութեան հերթական ժողովը, որը, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ ամսիս 24-ին տեղի ունեցած ընդհանուր ժողովը արդէն ընտրել է նոր վարչութիւն, և չանցնելով հերթական հարցերի քննութեան մինչև նոր վարչութեան հետ միացեալ ժողով ունենալը, որոշեց հրաւիրել նորընտիր վարչութեանը ժողովի, որը նշանակված է առաջիկայ շաբաթ, ապրիլի 30-ին, կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան տանը երեկոյեան 8 ժամին:

◆ «Закавказье» թերթի № 91-ում տպված է այսպիսի բան. «Քաղաքում յամառ կերպով խօսում են, երբ մեր թերթի խմբագրութիւնը միացել է «Зак. Рѣчь» լրագրի հետ: Մենք կտրականապէս յայտնում ենք, որ ոչ մի միութեան մասին մի օրգանի հետ, որի ոգևորիչներ և ղեկավարներ հանդիսանում են Գոտուայի և իշխ. Գ. Ամիրաջիբիի միացեալ ուժերը՝ չէր կարող լինել և չը կայ»: Արտատպելով այս լուրը, «Зак. Рѣчь»-ի խմբագիրը իր կողմից երկար պատճառաբանութեամբ բողոքում է յիշեալ անհեթեթ և հասարակութեանը մոլորեցնող լուրի դէմ:

◆ «Зак. Рѣчь»-ը գրում է, որ ռուսաց սինօդի կարգադրութեամբ Թիֆլիսում գտնվող վրաց սեմինարիայի նախկին մեծ շինութիւնը անցնում է վրաց իմերէթային սինօդական գրասենեակի տնօրէնութեան, ըստ որում գրասենեակը պարտաւոր է վճարել այն 572,000 ր., որ ծախսվել է սեմինարիայի նոր շինութեան վրա: Առաջ հին շինութիւնը գտնվում էր հոգևոր սեմինարիայի վարչութեան ձեռքում:

◆ Թիֆլիս է եկել Կարսի շրջանի զինուորական նահանգապետ ֆօն-Պարկաուն:

◆ Ապրիլի 28-ին ցերեկով երկրաշարժ է պատահել Գանձակում:

◆ Անցեալ կիրակի, ամսիս 24-ին, մեշչանների վարչութեան բնակարանում տեղի ունեցաւ II ընտրողական շրջանի՝ այսինքն 4-րդ, 5-րդ և 6-րդ քաղաքամասերի հարկատու դասակարգի ընդհանուր ժողովը առաջիկայ 1911—1913 թ. թ. եռամեակի համար լիազօրներ ընտրելու մեշչանների գործերը վարելու համար: Լիազօրներ ընտրվեցին հետևեալ 28 անձինք. Բ. Առաքելեան, Ս. Գալստեան, Յ. Սահաթճաղեան, Պ. Վարձիգուլեան, Ն. Նարիմանեան, Վ. Գօզալեան, Ա. Միրզօյեան, Դ. Դիվանեան, Ս. Շաւումեան, Գ. Հախնազարեան, Ա. Աշուղբաբեան, Գ. Օտեան, Պ. Խուրոյեվ, Ա. Զմըշկեան, Բ. Եարալեան, Գ. Ադամիձէ, Ս. Նաւասարդեան, Գ. Տէր-Ստեփանեան, Դ. Մաչլեան, Գ. Քիշմիշեան, Ա. Օվչեան, Ա. Բալաղեան, Գ. Դեղուկեան, Մ. Բէյլակի, Ն. Յարութիւնեան, Մ. Շպիգել և Մահմադ Ղուլիեվ: Շնորհիւ աւագի կարգադրութեան, ընտրութիւնը բաւական կանոնաւոր էր:

◆ Վրիպակ.—«Մշակի» № 84-ի մէջ տպված «Համալի մասլահաթի» մէջ սպրդել են երկու սխալներ: Ֆելիէտօնի երրորդ սիւնակի վերևից 12-րդ տողի մէջ աւելորդ անգամ գործածված է «նա» և վերջին 5-րդ սիւնակի «Մեղայի» մէջ փոխանակ «Որկրամոլութեամբ», տպված է «Երկրամոլութեամբ» և այլն:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան վերջին նիստը կայացաւ կիրակի, ամսիս 24-ին, երբ և տեղի ունեցան գլխաւոր խորհրդի և վերստուգիչ յանձնաժողովի անդամների ընտրութիւնները:

Խորհրդի նախագահ միաձայնութեամբ վերընտրվեց գեներալ Գ. Կազբեկը:

Խորհրդի անդամներ ընտրվեցին՝ Լ. Բօգվաձէ, Փ. Գօգիչայշվիլի, Ս. Գօրգաձէ, Ն. Ելիավա, Գ. Կարիճաշվիլի, Ալ. Մդիվանի, Շ. Միքելաձէ, Ս. Ջափարիձէ, Գ. Րցխիլաձէ, Ալ. Դիփշիձէ, Արչ. Ջաջանաշվիլի և Շ. Դէդուբբիշվիլի:

Փոխանդամներ ընտրվեցին՝ Փ. Մգելաձէ, Ի. Ճավճավաձէ և Ի. Վարթագավա:

Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Ա. Ղուլաձէ, Կ. Կանդէլակի և Դ. Դումբաձէ:

◆ Ամսիս 24-ին կայացաւ վրաց նորակազմ ակումբի անդամների ժողովը, որին ներկայ էր 11 աւագներից միայն մի հոգի:

Անդամներից մէկը առաջարկեց լիկվիդացիայի ենթարկել վրաց ակումբ ունենալու միտքը, որովհետև ցայսօր ոչ շէնք ձեռք բերվեց և ոչ էլ կանոնաւոր գործունէութեան դիմեց աւագների խորհուրդը, չը նայած որ 1,500 րուբլի անդամավճարներից աննպատակ կերպով ծախսված է 500 րուբլի:

Այս հարցը վերջնականապէս լուծելու համար որոշվեց հրաւիրել նորից անդամների ընդհանուր ժողով:

◆ Նորերս Թիֆլիս վերադարձաւ Պետերբուրգից դասախօս Գ. Ռօբաքիձէն, որը մօտ ապագայում մի շարք դասախօսութիւններ կը կարդայ Ֆ. Նիցշէի և Համլէտի մասին:

◆ Ի. Էլիաշվիլին գրել է մի նոր մեծ վէպ, որի նիւթն է Շոթա-Ռուսթավելին:

◆ Վրաց ազնուականների բանկի գլխաւոր կառավարիչ Գ. Լասխիշվիլիի փոխարէն, որը Թիֆլիսից աքսորվեց, հրաւիրվեց Մ. Սարաջիշվիլի:

◆ Երկրորդ Պետական Դումայի անդամ Մախարաձէն, որը բանտարկված է Նիկոլայեվի բանտում, ծանրապէս հիւանդացել է ջղերի քայքայումով:

◆ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեանը 1910 թ. յունվարից անդամագրվել են 168 անդամ:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայ թատերասէրների խումբը Ժողովրդական Տանը ապրիլի 25-ին ներկայացրեց 1) Մօլիէրի «Սկապէնի արարքները» 3 գ. կոմէդիան, որի մէջ աչքի ընկան Գ. Փիրումեան և Մն. Տէր-Առաքելեան. միւս դերակատարներն էլ խաղում էին սահուն: Այդ ներկայացման առիթով պատրաստված էին նոր զգեստներ, 2) Մ. Տէր-Գրիգորեանի «Էս էլ քե մօցիքլութին», որի մէջ բոլոր խաղացողներն էլ—Ղուշչեան, օր. Թարխանեան, Տէր-Առաքելեան, Գրիգորեան, Փիրումեան—լաւ էին, 3) Գ. Սունդուկեանի «Օսկան Պետրովիչն էն կինքումը» 1 գործ. կատակերգութիւնը, որ սովորական ուրախութիւնը յարուցեց թատրոնասրահը ամբողջովին լցրած բազմութեան: «Էս էլ քե մօցիքլութին» մէջ Փիրումեան արտասանեց օրվայ չարիքին համապատասխան սեփական ոտանաւորներ:

Ներկայացումը վերջացաւ կէս գիշերից շատ անց, որ անցանկալի երևոյթ է:

Հետևեալ ներկայացումը տեղի կունենայ վաղը՝ հինգշաբթի և կը խաղցվի «Կրեչինսկիի հարսանիք» կոմէդիան Արաքսեան ամուսինների մասնակցութեամբ: Ես.

—

Ապրիլի 29-ին Վրաց Ազնուականների Թատրոնում Մահմէդական Դրամատիկական Ընկերութիւնը տալու է Թուրքերէն նոր օպերետա՝ «50 տարի երիտասարդ» անունով, որի լիբրէտտոն գրված է ռուսերէն:

—

Ապրիլի 20-ին, Բաքւում, Մայիլօվների թատրոնում նշանակված օպերային ներկայացումը հարկ եղաւ յետաձգել, որովհետև ծախված էին—ոչ աւել, ոչ պակաս—ընդամենը երեք տոմսակ:

—

Բաթում, 24 ապրիլի

Շաբաթ գիշերը, լոյս ապրիլի 24-ին, տեղի ունեցաւ քաղաքային կլուբի դահլիճներում հայկական երեկոյթ յօգուտ լուսաւորչական և կաթօլիկ հայ ծխական դպրոցների. կար և վիճակախաղ: Երեկոյթը անցաւ շատ աչող. թէ նշանակված համարները լաւ անցան, թէ ընտիր ու բազմաթիւ հասարակութիւն կար և թէ լաւ եկամուտ ստացվեց: Առ այժմ ճիշդ եկամուտը յայտնի չէ, բայց 2500-ից պակաս չի լինի: Սա ամենալաւ վկայականն է աշխատողների ի սրտէ ջանադրութեան և ընդունակութեան: Երեկոյթի ընդհանուր կառավարչուհին էր տիկին Զաբէլ Զիլինկիրեան, որին և աջակցում էին աչքի ընկնող տիկիններն ու պարոնները: Արժանի են ամենքն էլ յատուկ շնորհակալութեան: Մի փոքր շունչ կառնեն այդ եկամտով ծխական դպրոցները:

M. M.

—

Ախալքալաք, 20 ապրիլի

Ամսիս 16-ին, հասարակական ժողովարանի ակումբում, յօգուտ հայոց ծխական և բաբիստների դպրոցների կայացաւ միացեալ երեկոյթ հետևեալ բովանդակութեամբ. Թուրքերէն լեզուով խաղացին «Պաշտօնս է խամփալ» վօդէվիլը: Երկրորդ բաժնում նուագեց սիրողներից կազմված խումբը բալալայկաների վրա՝ Թուրքաց դպրոցի ուսուցիչ Ալիէվի ղեկավարութեամբ: Երրորդ բաժնում խաղացին հայ սիրողները «Կըթկըթ»: Այնուհետև եղան պարեր: Նուագում էին զինուորական երաժշտախումբը և սազանդարները: Ֆօյէն և սեղանատունը զարդարված էին կիսալներով և կանաչներով: Խուռն հասարակութիւնը լցրել էր ժողովարանը: Մեծամասնութիւնը բաբիստներ էին. հայերն անհամեմատ քիչ էին: Դրա պատճառն այն է, որ բաբիստները նախօրօք ծախել էին տոմսակները բացառապէս իրանց շրջանում: Տոմսակները սպառված էին: Մուտքը բաւարար էր. սպասվում է մօտ 500 ր. զուտ արդիւնք: Խրախուսանքի արժանի են հոգաբարձութեան նախագահ և երեկոյթի կարգադրիչ Յ. Սարգիսբէկեանի ջանքերը, որքան կարելի է շուք և փայլ տալու երեկոյթին: Գովելի է երկու դպրոցների ուսուցչական խմբերի յղացած միտքը, միացած ուժերով երեկոյթ կազմակերպելու:

Այս առաջին դէպքը թող օրինակ հանդիսանայ ապագայում աւելի ճոխ նման երեկոյթներ կազմակերպելու և երկու հարևան ժողովուրդների եղբայրական համերաշխութեան կապը ամրապնդելու: Գահ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ

(Նամակ Կիլիկիայից)

Օրուան խնդիրը և ամենուն խօսակցութեան նիւթը, այս կողմեր, Հասան-Բէյլիի Նորակերտ և կիսաւարտ եկեղեցիին քանդումն է՝ Ադանայի կուսակալութեան որոշմամբ, որուն յետաձգումը սակայն հեռագրուած էր Պոլիսէն:

Խնդիրը իսկապէս եկեղեցիին շէնքին քանդումը չէ միայն, թէև այդպէս բան մը և ոչ իսկ անցեալ բէժիմին օրովը տեսնուած էր: Զափազանց մոլեռանդ, չար և անգութ, այնուամենայնիւ սուլթան Համիդ—հանրահռչակ հայահալածը—զգուշացած էր և կը զգուշանար հպատակ քրիստոնէից կրօնական զգացումները վիրաւորող բիրտ գործողութեանց ձեռնարկել ուղղակի: Ներկայ խնդրոյն նշանակութիւնն, արդարև, աւելի ծանրակշիռ և դժնդակ է:

Հասան-Բէյլիի եկեղեցին կիլիկեան դէպքերուն այրուած էր, ինչպէս մօտ 300 տունէ բաղկացած գիւղը ամբողջ: Ժողովուրդը իր տեղը վերահաստատուելէն ետքը բնական էր, որ ամեն բանէ առաջ խորհէր իր այրացաւոր եկեղեցիին շինութեան վրայ: Եւ օգտուելով սև առիթէն՝ գիւղացիք այս անգամ տարաբաղդ խորհուրդը կունենան զայն վերաշինել գիւղին լաւագոյն մէկ դիրքին վրայ, բարձր և օդասուն:

Ոչինչ աւելի օրինաւոր, և մանաւանդ ոչինչ մեղադրելի այս փափագին մէջ,—պիտի ըսուի: Եւ ահա, մօտ ինն ամիս առաջ կը ձեռնարկուի անոր շինութեան, սրբատաշ և կանոնաւոր:

Գիւղին փոքրաթիւ Թիւրքերը, որոնք բնականաբար այդ եկեղեցին այրած ըլլալու անխառն գոհունակութիւնը և անպատիժ քաջալերութիւնը ունենալէն ետք՝ դժգոհութեամբ կը դիտէին իրենց քանդումներուն տակէն անոր յառնումը աւելի հոյակապ և գեղեցկադիր, պատուոյ հարց կընեն զայդ, և բանը կը հասնի մինչև կուսակալութեան, թէ հայերը եկեղեցի անունին ներքևամբոց կը շինեն եղեր և հետևաբար... վնասակար և հակասահմանադրական ձեռնարկութեան մը և ազգերու համերաշխութեան գաղափարին դէմ կը մտնին*):

Ու այսպէս՝ ոչ ոքի միտքէն անգամ չանցած ցնդաբանութիւնը ահագին համեմատութեանց կը հասնի մեր այս երանելի երկրին մէջ, արդարև հրաշագան:

Բռողն ալ իրենք, լռողն ու հաւատացողն ալ իրենք և, ի վերայ այսր ամենայնի, գործադիր ուժն ու իշխանութիւնն ալ իրենք: Աւելին պակասը ո՞վ պիտի փնտռէ: Հայուն համար չէ՞ որ կը խօսուի: Հայուն վրայ ի՞նչ ըսէք նէ, չի գար, չի յարմարիր: Ալ ի՞նչ հարկ ուրեմն գործը պաղարեամբ քննել և խնդրոյն հիմը հասկնալ, երբ աւելի դիւրին և գործնական միջոցը կայ արդէն, այն է՝ այդ «գործը» և «գործին հիմը» քար ու քանդ ընել... Ու կըլլայ:

Եւ սակայն քանդումի և աւերումներու դասական այս երկրին մէջ Հասան-Բէյլիի խեղճուկ եկեղեցին չէր որ ամրաշէն կը շինուէր:

Անկէ քանի մը ժամով միայն հեռուն Խասնի հայաբնակ գիւղին մէջ գերմանները տասնապատիկ աւելի մեծ, ամուր և հսկայ շինութեանց ձեռնարկած են՝ տեղաւորուելու և մնալու համար, լատինները և բողոքական միսիոնարութիւնքը նմանօրինակ շէնքերով ամեն կողմ լեցուցած են... ու կը շարունակեն. և կառավարութիւնը, որ կը տեսնէ բոլոր ատոնք, ոչ միայն չարգիլեր ու չի քանդեր—և ի՞նչ իրաւունքով—այլ և ոչ իսկ հասարակ դիտողութիւն մը կընէ... որովհետև անոնք օտար են, հզօր, և ի հարկին՝ կրնան դիմանալ:

Հայութեան կացութիւնը տարբեր է: Անպատճառ պէտք չկայ որ ան՝ ինչպէս կերեւակայեն—վստահ սակայն թէ այնպէս չի կրնար ըլլալ—անջատողական ոգիի տէր ըլլայ և օսմանեան նոր կարգերուն դէմ դաւաճան, որպէսզի իրենք անոր դէմ ցուցնեն ամենածիծաղելի պարագաներու մէջ իսկ և ամենաբիրտ եղանակաւ: Այլ անհրաժեշտ է, որ վերջապէս միշտ մէկու մը—այսինքն հայուն, առ ի չգոյէ և մանաւանդ առ ի չկարողութեան կայսրութեան միւս քրիստոնեաներուն—ցոյց տան, թէ իրենք կան և ուզածնին կրնան ընել եղեր, որքան ալ անարդար ըլլայ:

«Ցաղթապանծ» յաղթութիւն մը՝ ձրիաբար շահուած: Այնպէս չէ՞: Ու ցաւալի չէ՞ ասիկա և մանաւանդ անվայել և արատաւորիչ ազատ (?!) բէժիմին:

Նկատելու է, թէ կառավարութիւնը—որ իր այս ծանր հարուածը կուղղէ երկրին ամենէն հաւատարիմ և ամենէն սահմանադրասէր մէկ ժողովրդեան վիրաւոր զաւակներուն՝ խոցելով այսպէս, ամենէն արտառոց, անտեղի և վտանգաւոր ենթադրութիւններով, անոնց կրօնական տոհմային նուիրական անբռնաբարելի զգացումները, որոնք դեռ երէկ իսկ նոյն բիրտ և եղեռնական քաղաքականութեամբ, օսմանեան նորածիլ սահմանադրութիւնը յաւէտ արատաւորող, արինահոսութեանց մէջ խեղդամահ կըլլային—առով զանոնք պարզապէս եւ կրկին մատնանիշ կընէ երկրին իսլամ մոլեռանդ այն տարրերուն, որոնց սրտին մէջ եթէ հայ-քրիստոնէի արեան ծարաւն ու պապակը զսպուած կը մնայ, բայց, անկասկած, անհետացած չէ:

---

*) Տես «Մշակ» №№ 76, 77.

*) Ատենին՝ իսլամներուն «ղիմինէ ռէօյդու» և սուլթան Համիդին «փէսատ դըր» բառերը կը գործածուէին եղած բռնութիւնքը և ապօրինաւորութիւնները արդարացնելու: Ներկայ բէժիմին օրովն ալ, երբ պէտք ըլլայ խեղդել ընդդիմադիր ձայն մը, երբ արտակարգ միջոցի մը դիմելը արդարացուիլ ուզուի—ըլլայ ազգի մը խմբակցութեան մը կամ անհատի մը դէմ—կը պոռան, թէ «օսմանեան համերաշխութեան գաղափարին դէմ կը գործուի»: Շատ սովորական և ընթացիկ բանաձև մը, «համերաշխութիւն» բառը խեղդամահ ընելու չափ, որով կարդարանան այլևս և կը սրբանան «առաց և եղէցի» նման՝ ամեն վարչական և ոչ-վարչական ապօրինաւորութիւնները: Ալ ով կրնայ հակառակ խօսիլ, առանց ռէաքսիօնէր կոչուելու: Սանկ, ճիշդ մենէ ոմանց պէս, որով իրենց նման չեղողները կըլլան, անպատճառ և առանց բացէ մը կորսնցնելու, չէրիարջի, մոտեցիչ եւ յետադէմ...:

Այո, կառավարութեան այս վարմունքը հայութեան դէմ վիրաւորական ըլլալէ աւելի գրգռիչ է պարզապէս։ Ան, տեղի տալով Հասան-Բէյլիի նման աւերեալ գիւղի մը նորակառոյց եկեղեցին հիմնայատակ ընելու՝ խալամ ժողովրդեան յայտնի հայատեաց փափագին, ուղղակի անոնց հետ կը դաշնակցի դաւանելու նախ, որ, իրաւ, հայերը այս երկրին մէջ կասկածելիներ են, և յետոյ, ուէ դժբաղդ դէպքի մը պարագային, ինքզինքնին պաշտպանելու վիճակի մէջ գտնուելու չեն։ Պարզ խօսքով, ի հարկին, անպայման կոտորուելու են։

Ենթադրենք իսկ պահ մը, որ եկեղեցին ամբաշէն ըլլալուն՝ պիտի կրնար վտանգի պարագային հայերուն ինքնապաշտպանութեան վայր մը դառնալ։ Ատկէ ի՞նչ կելլէ, Հասան-Բէյլիի եկեղեցիէն հայերը պիտի հալածէին օսմանեան պետութիւնը։

Հայը, իր այսքան քաշածներէն վերջ— ինչ որ մեծապէս տարակուսելի է, թէ վերջացած է—բացարձակ իրաւունք ունի գէթ այսքան մը խորհելու իր և իր սիրելեաց թանկագին կեանքը պաշտպանել ապագայ պատահականութեանց դէմ։ Բայց տառով ան ինչպէս պիտի կրնայ խալամներուն վնաս հասցնել, եթէ անոնք իրենց տեղը հանգիստ մնան, և մինչև հո՛ն՝ զանոնք ալ ջարդելու չերթան։

Եւ այդ ջարդի ուրուականն ու մղձաւանջը կայ ու կը մնայ այս դժբաղդ երկրին վրայ, երբ մանաւանդ խալամի միշտ վառ մոլեռանդութեան հետ՝ սահմանադրական թիւրք կառավարութիւնն ևս այս կարգի զգացումներով տոգորուած է դէպի մեզ։

Կըսեն թէ կուսակալը իր այս արարքը կարդարացնէ, յենլով թիւրք գրգռուած հոգեբանութեան վրայ, որ կրնար ծանր և անդարմանելի համեմատութեանց հասնիլ... եկեղեցիի մը շինութեան պատճառով։

Պարապ տրամաբանութիւն։ Ենթադրելով իսկ, որ առանց կառավարութեան աչքագոցութեան իրաւ ըլլար թիւրքերուն գրգռութիւնը—և երբ անոնք հանդարտ եղած են—այդ էր կացութեան իրական դարմանը։ Ա՛լ ծեր կը մնայ օրէնք եւ արդարութիւն գոռ ու գոչումին, որով ամեն օր հազարաւոր թերթեր կը մրոտեն... անոնց չգոյութիւնը պարտկելու համար։

Սահմանադրական ռէժիմին հաստատութիւնը գաւառաց մէջ գրեթէ դեռ անթափանցելի թիւրք ուղեղներուն՝ ծառայած է աւելի զանոնք գրգռելու... հայերուն դէմ։ Ամեն անգամ, երբ հարկ զգացուի ներկայ ռէժիմին դէմ փորձ մը ընել, անոնք հայութիւնը ջարդելու պիտի ելլեն, մինչ կառավարութիւնն ալ՝ ինչպէս միւս անգամ՝ իր անկարողութիւնը և մեղսակից անտարբերութիւնը պարտկելու համար «հայերը անջատողական էին» պիտի հռչակէ։ Թէև մեզի չափ և թերևս մենէ աւելի աղէկ գիտէ, որ հայերը այդ գաղափարը չեն սնուցաներ, թէ անոնք իրենց բարօրութիւնը կը փընտռեն-կըռնեն, դժբաղդաբար առանց հասկցուելու օսմանեան ամբողջութեան մէջ։

Ադանայի մասին անցեալներու շշուկը անգամ մը ևս ապացոյց եղաւ, թէ արդարև հայութեան ներկայ ապահով ըսուած կացութիւնը որքան վաղանցիկ և մակերեսային է և կապուած իսկապէս չնչին ու թոյլ ֆակտօրներու։

Թէև հաւատացած ենք, որ առանց կառավարութեան թոյլտուութեան՝ անտարբերութեան և աչքագոցութեան, ոչ մէկ դէպք չի կրնար պատահիլ—ինչ ալ ըսեն—այնուամենայնիւ ցաւալի է հաստատել, թէ երկրին իրական խաղաղութիւնը և անդորրութիւնը մշտապէս ապահովող էական և դըրական ոչ մէկ ձեռնարկութիւն եղած է դեռ։ Ատոնք, շա՛տ-շա՛տ, կապուած են պաշտօնատարներուն անձին և սիրտին։ Եւ ի՞նչ տկար ուժ։

Ամենքն ալ հաւատացին—ինքն ալ մէջն ըլլալով—որ եթէ Ջէմալ բէյ չըլլար, հաւանական է, որ Ադանան այս անգամ ալ պիտի ջարդուէր։ Լա՛ւ, բայց միշտ Ջէմալ բէյ մը կրնայ չգտնուիլ։ Ի՞նչ պիտի ըլլայ ուրեմն երկրի մը վիճակն ու ճակատագիրը, երբ ան օրինական որոշ և տևական ապահովութեանց յենելէ աւելի անձերու, լոկ յարածուփ անձերու, կապուած և մատնուած կըլլայ։

Գոնէ մենք այնպէս կը հաւատանք, թէ այս չէ սահմանադրական և ազատ կառավարութեան մը ընծայելիք օգուտը՝ թիւրքիոյ նման ինկած և հիւծած երկրի մը վերականգնումին համար։

... Ու զարմանալի չէ՝ որ դեռ երէկ հայ արիւնի մէջ ծփացող և տարուբեր այս անկայուն երկրին մէջ՝ Հասան-Բէյլիի դէպքին նման ձախաւեր գործերը, հեռու ապացուցանելէ օսմանեան կառավարութեան հեռատեսութիւնը և անկեղծութիւնը, միշտ վառ կրակի վրայ թափուած իւղեր ըլլան։

Այո, անստոյգ կացութիւն։ Մանաւանդ ցաւալի վիճակ։

Դիտող

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պետական Դումայի նախագահ Րօդզեանկօն արգելեց ապրիլի 20-ին, թօքախտային օրը, ծաղիկներ վաճառել նաև Դումայի կուլուարներում, պատճառաբանելով և վախենալով՝ թէ այդ կարող է սովորութիւն դառնալ. օրինակ սոց.-դեմօկրատներն էլ կարող են մայիսի 1-ին կարմիր ծաղիկներ վաճառելու թոյլտուութիւն խնդրել։

◆ Ֆրանսիական զօրքերը արդէն Ֆէզումն են։ Կարգ ու կանօնը աստիճանաբար վերականգնված է։

◆ Ֆրանսիական կառավարութիւնը բնաւ մտադրութիւն չունի նոր կօնֆերէնցիա գումարել Մարօկկօյի գործերի առիթով։

◆ Վիէննայի արտաքին գործերի մինիստրութիւնը հաղորդեց ֆրանսիական մինիստրութեան՝ թէ Աւստրօ-Ունգարիան մարօկկեան հարցի մէջ լիովին պաշտպանում է գերմանական տեսակէտը։

◆ Ֆրանս-սպանական յարաբերութիւնները մնում են չափազանց լարված։

◆ Հռոմում մամուլի կօնգրէսը քըննում է հետևեալ խնդիրները. մամուլի օրգանների դատական քննութիւն. պրօֆէսիօնալ գաղտնիքը ժուրնալիստիկայում. մենամարտ ժուրնալիստների միջև պրօֆէսիօնալ հողի վրա. միջնորդ դատարան ժուրնալիստների միջև. իրաւաբանական մարմիններ մամուլի միութեան կից. մամուլի միութեան անդամների ապահովագրութեան զարգացումը։

◆ Վիէննայից հեռագրում են, որ յունական մամուլի տոնի փոփոխութեան հետ միաժամանակ, ինչպէս հաղորդում են, յունաց թագաւորը համոզեց Վիլհէլմին Կորֆու կղզում գտնված ժամանակ՝ ազդել թիւրքիայի վրա կրետական հարցում։

◆ Գերմանական լանդտագը բուռն վիճաբանութիւններից յետոյ չընդունեց պահպանողականների առաջարկութիւնը և որոշեց սոց.-դեմօկրատ Լիբկնեխտին դատարանին չը յանձնել ռուսական և հեսսէնեան իշխանութիւններին դատապարտելու համար։

◆ Լիսաբօնում մի վառօդային պահեստի պայթումի ժամանակ սպանվել և վիրաւորվել են մեծ թւով մարդիկ։

◆ Սերբիական Պետր թագաւորը Պարիզ կը գնայ երեք օրով մայիսի 23-ին։

◆ Պէկինի լրագիրներին արգելվեց մանրամասնութիւններ տպել Կանտօնում տեղի ունեցած դէպքերի մասին։

◆ Կանտօնում կառավարական զօրքերը անխնայ ջարդում են յեղափոխականներին։ Վերջին կռւում յեղափոխականներից սպանվեցին 10, վիրաւորվեցին 100 մարդ։

◆ Րօստովում Դ./վ. քաղաքագլուխ ընտրվեց 35 ձայնով ընդդէմ 21-ի Րօստովի «սօյիւզնիկների» ղեկավար Պետական Դումայի անդամ Մ. Կիրիանովը։

◆ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը հրահանգով արգելեց երկաթուղային բոլոր ծառայողներին ընդունել նուէրներ երկաթուղային վարչութեան հետ գործ ունեցող մարդկանցից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լօնդօնի թերթերը հաղորդում են, որ վերջերս վախճանված նիւ-եօրկցի միլիօնատէր Հարրիմանի մահվան առիթով, որը հռչակված էր իր անսահման գործունէութեան ընդունակութեամբ, Էդիսօնը ամերիկական թերթերից մէկում գրեց, որ ինքը մտադիր է ապրել ոչ նուազ, քան 150 տարի, աշխատելով երկու անգամ աւելի, քան Հարրիմանը, որի իրականացման համար՝ նա առաջ է բերում հետևեալ սիստեմը։

Մարդս պէտք է չափաւոր կերակրվի, չափաւոր քնի և չափաւոր հագնվի։

Մարդիկ վաղաժամ են մեռնում նրանից, որ շատ են ուտում կամ, Էդիսօնի խօսքերով արտայայտած, «նրանք չափազանց շատ վառելիք են մատակարարում վառարանին»։

Ինքը, Էդիսօնը, ուտում է շատ քիչ, այդ պատճառով էլ նա լաւ է քնում, ըստ որում երբեք երազ չէ տեսնում։ Քնելով 6 ժամ, նա իրան շատ լաւ է զգում։ Իսկ ինչ վերաբերում է հագնվելու ձևին, Էդիսօնը յանձնարարում է հագնել լայն կօշիկներ և պիջակ ու պանտալօն։

«Ես հագնվում եմ այնպէս, որ հագուստս չը խանգարէ արեանս նօրմալ շըրջանառութեանը։

«Այս ձևով հագնվելիս՝ մեռնում են բոլոր բակտէրիաները։

«Իմ միակ պակասութիւնն այն է, որ ես ծխում եմ։

«Իմ կինը շատ արիւն պղտորեց սրա համար, բայց այն օրից, երբ իմացաւ, որ այս պակասութիւնն ունի նաև Միացեալ-Նահանգների գերագոյն դատաւորը, նա հաշտվում է այս իրողութեան հետ՝ թոյլ տալով, որ ես ծխեմ։»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

25 ապրիլի

ՎԵՐՆԻ։ Լոյս ապրիլի 24-ի գիշերը զգացվեց ուժեղ երկրաշարժ, որը կրկնվեց նաև գիշերը։

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ։ Բուկավիշնիկօվը կըտակեց մօտ մի միլիօն րուբլի բարեգործական նպատակներով, երկու հիւանդանոց և երեխաների հիւանդանոց կառուցանելու։

ՎՕԼՕԳԴԱ։ 28 նաւերից ջրասոյզ եղան 5-ը։ Մնացածները փչացվեցին։ Մարդկանց հետ դժբաղդութիւնների մասին լուրեր չըկան։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքային դումայի ֆինանսական մասնաժողովը որոշեց միջնորդել Մօսկվան դարձնելու զէմստվային անկախ միութիւն։

Երեկոյեան ժամը 6-ին այրվեց Մօսկվայի շոգեշարժ ջրաղացի հինգ-յարկանի շինութիւնը Սաչօլնիկում։ Կանչված են բոլոր հրդեհաշէջ խմբերը և զօրքեր։

500 րուբլի տուգանքի ենթարկվեց «Трудовая Копѣйка» լրագիրը սուտ տեղեկութիւններ հաղորդելուն համար։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Սէյմի սօցիալ-դեմօկրատական ֆրակցիան որոշեց վերացնել գերբային, օղու, աղի և խաղալու թղթերի հարկերը։

ԱՆԱՆԻԵՎ։ Երևան հանվեց խօլերայի առաջին դէպքը։

ԲԱՐՍԵԼՕՆԱ։ Բացվեց բամբակի միջազգային կօնգրէսը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր.., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.: **Պօստատար** № 4 **գնացքը**՝ 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 3 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.: **Մարդատար** № 6 **գնացքը**՝ 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.: **Խառն գնացքը**՝ IV կարգի վագօններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր., Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պօստատար** № 74/75՝ 1 ժ. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար.՝ 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երևան մտնելու): Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղևորվում է Երևան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երևան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ: **Մարդատար-ապրանքատար** № 78/79 **գնացքը**՝ 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ՝ Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան, 9 ժ. 45 ր. առաւ., Երևան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից դէնը այլևս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ **արագ.** № 1 **գնացքը**՝ 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ: **Պօստատար** № 3 **գնացքը**՝ 10 ժ. 47 ր. առ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.: **Մարդատար** № 5 **գնացքը** 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր. երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.: **Խառն գնացքը** IV կարգի վագօններով ըստ հարկի կարևորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան:

ԲՕՐԺՕՄ՝ **մարդատար** № 7/8 **գնացքը**՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բօրժօմ՝ 1 ժ. 38 ր. ցերեկ.: **Մարդատար** № 9/10 **գնացքը**՝ 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բօրժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **մարդատար** № 5 **գնացքը**՝ 4 ժ. 25 ր. ցերեկ.: **Պօստատար** № 3 **գնացքը**՝ 9 ժ. 52 ր. առ.: **Արագ** № 1 **գնացքը**՝ 10 ժ. 24 ր. երեկ.: **Խառն գնացքը** IV կարգի վագօններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար** № 72/73 **գնացքը**՝ 7 ժ. 38 առաւօտ.: **Մարդատար-ապրանքատար**՝ № 80/81 **գնացքը**՝ 1 ժ. 26 ր. ցերեկվայ:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ** № 2 **գնացքը**՝ 8 ժ. 52 ր. առաւօտեան: **Պօստատար** № 4 **գնացքը**՝ 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդատար** № 6 **գնացքը**՝ 2 ժ. 54 ցերեկ- **Խառն գնացքը** IV կարգի վագօններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ:

ԲՕՐԺՕՄԻՑ՝ **Մարդատար** № 9/10 **գնացքը**՝ 9 ժ. 28 ր. գիշ.: **Մարդատար** № 7/8 **գնացքը**՝ 7 ժ. 18 ր. առաւօտեան:

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բագու՝ և № 1 Բագու-Թիֆլիս) առանց վագօնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բագու-Րօստով, միայն վճարելով պլացկարտի գինը:

Մայիսի 15-ից սահմանվելու է արագ գնացքներում անմիջական հաղորդակցութիւն առանց վագօն փոխելու Թիֆլիս-Բագու-Կիսլօվօդսկ միայն **միէս** վագօնով (I և II կարգի):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներվային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՁԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՁԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ **Բ. Նաւասարդեան**
Յ. 0—43

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(օ. մ.) 1179. 100—85

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինօվսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 416. 100—

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեն
րական և կաշուի հիւանդութիւնն
Սիֆիլիսի բժշկութիւն Էրլիխի «606
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ:
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան:
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Հասցէն (Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33.
(Сололаки, уголъ Бебутовской и Паске
(Չ.ու.կ.) 1134. 100

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, քթի, կկի,
հիւանդութիւններ
Ընդունե- (առաւօտեան 9—1 ժամը.
լութիւնը (երեկոյեան 5—7 ժամը.
Վելեամինօվսկայա փ. № 13, տ. Սե
նովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Վարչութիւն

սրանով յայտարարում է, որ ԷՔՍՏԵՐՆՆԵՐԻ (վկայական ստանալու) ՔՆՆՈՒԹԻ ՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ։ Ցանկացողները մինչև մայիսի 7-ը պէտ ներկայացնեն դպրոցիս վարչութեանը խնդրի հետ նաև 1) ծննդեան վկայական (իս կանը և ո՛չ քաղուածք), 2) լուսանկար և 3) քննութեան վարձ՝ հինգ րուբլի։ ԱԶԴ.—Նորեկների ընդունելութեան քննութիւնները լինելու են առաջիկայ օգոստոս
(Հ.Հ.) 2—1



GLYCÉROPHOSPHATE GRANULÉ ROBIN

ԳԼԻՑԵՐՕՖՕՍՖԱՏ ՌՕԲԷՆ'Ի
ՀԱՏԻԿԱՒՈՐ
ԳԼԻՑԵՐՕՖՕՍՖԱՏ ԿՐԻ եւ ՍՕԴԱՅԻ
Միակ խրացված ֆօսֆատ
ԱՄՐԱՑՆՈՒՄ Է ՋՂԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ
Գործադրվում է պարիզեա հիւանդանոցներում։

Արագ ներգործում է ՆԵՎՐԱՍՏԵՆԻԱՅԻ եւ ՄՏԱՒՈՐ ՅՈԳՆԱԾՈՒԹԵԱՆ ժամանակ, ՐԱԽԻՏԻ դէմ, ոսկորների բուլութեան դէմ՝ մանկան աճման, յղիութեան եւ սնուցման շրջանում, եւ այլն։

Լաւ համ ունի։ Ընդունվում է ջրով կամ կաթով։
Շաքարախտաւորների համար պատրաստվում են լէպէշկաներ։

Վաճառվում է դեղատներում եւ դեղատնային խանութներում։

(Հ.) (M. 152627) 334. 12-



ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԳՐԱՄՕՖՕՆ“
ԿՈՎԿԱՍԻ ԵՒ ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Թիֆլիսում, Գօլօվինսկի պր. № 9.
ԿԱՐԵՒՈՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ!
ԲԱՒԱԿԱՆԱՉԱՓ ԷԺԱՆԱՑՎԱԾ ԵՆ ԳՆԵՐԸ ԳՐԱՄՕՖՕՆԱՅԻՆ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ
«ԳՐՈՂ ՀՐԵՇՏԱԿ»
մարկայով—

ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ ՆՈՐ ԳՆԵՐԸ.	ռ.	կ.
10" սեւ էտիկէտով, երկկողմ	2	—
12" » »	3	—
7" շագանակագոյն	—	75
10" »	1	50
12" »	2	—

Օգտվեցէք առիթից և շտապեցէք «ԳՐԱՄՕՖՕՆ» ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ խանութը։

Պահեստում կան ՄԵԾ ԲԱԶՄԱԿՈՒԹԵԱՄԲ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ ռուսերէն, մօլօրուսերէն, պարսկերէն, թուրքերէն, հայերէն, վրացերէն և այլ օտար լեզուներով։

Բոլոր մեր պլաստինկաները կարելի է ստանալ թէ մեր խանութում և թէ երաժշտական գործիքներ [illegible]

ՁՐԻ ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ԿԱՏԱԼՕԳԸ ԵՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿԸ։
(Կ. Հ.) 164. 20—16

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.